
«ՆԻԿՈՂԻՄՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ» («ԳՈՐԾՔ ՊԻՂԱՏՈՍԻ») ԵՎ ԴՐԱ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐԻ ՄԱՄՅԱՆ

«Գործք Պիղատոսի»¹ պարականոն գրվածքը, որտեղ տեղ են գտել Հիսուսի դատավարության, խաչելության և հարության մասին աստվածաշնչյան ու արտասուրբգրային ավանդությունները, համաշխարհային գրականության մեջ հայտնի է նաև «Նիկողիմոսի ավետարան» (“Evangelium Nicodemi”) անվամբ: Այս խորագրով անվավերականին հանդիպում ենք XIII դ. սկսած, ինչը ցույց է տալիս, որ «Նիկողիմոսի ավետարան» անվանումը հետագայի նորամուծություն է²: Շփոթությունից զերծ մնալու համար հարկ ենք համարում նշել, որ «Նիկողիմոսի ավետարան» անվամբ հիմնականում բնորոշվում են պարականոնի այն տարբերակները, որոնք ներառում են նաև գրվածքի երկրորդ՝ Քրիստոսի «Էջբբ դժոխք» (“Descensus ad Infernos”) հատ-

¹ Արևելյան, այդ թվում հայերեն, ինչպես նաև հունարեն ձեռագրերում պարականոնը կրում է «Յիշատակարանք Պիղատոսի» (Ἐπιτομήματα Πιλάτου) խորագիրը (տե՛ս Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն, Ե-ՃԸ դդ, հ. Բ, Երևան, 1976, էջ 954–958): Երբեմն «Գործք Պիղատոսի» վերնագրով ենք հանդիպում նաև Պիղատոսի՝ Տիրերիոս կայսերն ուղղած թուղթը, որը, ըստ ավանդության, գրվել է խաչելությանը հաջորդող օրերին՝ որպես Հրեաստանում Հռոմի դրածոյի պաշտոնական արձանագրություն: Առաջին դարերում թուղթը բավական մեծ տարածում է ունեցել, անգամ հավակնել է դառնալ վավերական գրություն (տե՛ս G. S l u t e r. The Acta Pilati, important testimony of Pontius Pilate, recently discovered, being his official Report to the Emperor Tiberius, concerning the Crucifixion of Christ, London, 1879, pp. 47–69): Հիշյալ աշխատության հեղինակը ընդարձակ ծանոթագրություններով և անգլերեն թարգմանությամբ հրատարակել է 1844 թ. հայտնաբերված «Պոնտացի Պիղատոսի պաշտոնական արձանագրությունը Հիսուս Քրիստոսի դատավարության ու խաչելության մասին» լատիներեն հնագույն ձեռագիրը, որն այլ կեղծ գրվածքների շարքում պահվում էր Վատիկանի առաքելական գրադարանում՝ «Տիրերիոս կայսեր դատավարություն»-ը ընդհանուր խորագիրը կրող հավաքածուի մեջ: Այս թուղթը, սակայն, էականորեն տարբերվում է հայերեն ձեռագրերում պահպանված «Թուղթ Պիղատոսի Դատաւորի առ Տիրերիոս կայսեր» պարականոն գրվածքից [տե՛ս Ե. Տ ա յ է գ ի. Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, հ. Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց (այսուհետև՝ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց), Վենետիկ, 1898, էջ 359, 379]:

² P h. S c h a f f. The Ante- Nicene Fathers, The Writings of the Fathers Down to A.D. 325, The Twelve Patriarchs, Excerpts and Epistles. The Clementia, Apocrypha, Decretals, Memoirs of Edessa and Syriac Documents, Remains of the First Ages, vol. VIII, Michigan, 1951, pp. 353–354.

վածը³: Այս խորագիրը հատուկ է լատիներենով պահպանված բնագրերին⁴ ու դրանցից արևմտավրոպական այլ լեզուների թարգմանված հետագա խմբագրություններին, որոնց սովորաբար կցված է լինում նաև Կլավդիոս կայսերն ուղարկված թուղթը⁵:

Հունարեն ձեռագրերում «Էջբը դժոխք»-ն առկա է միայն լատինականից ազդված հետագայի ընդօրինակություններում, որոնց թիվն անհամեմատ քիչ է⁶, իսկ ասորերեն, դպտերեն, եթովպերեն, արաբերեն ու հայերեն⁷ ձեռագրերում այն մինչ օրս չի հայտնաբերվել⁸:

Որոշ գրչագրերում պարականոնը վերնագրված է «Աւետարան Նագովրացւոց» («Evangelium Naaraeorum»), իսկ Օքսֆորդում պահվող լատիներեն ձեռագրերից մեկում այն ունի «Աւետարան Նագովրացւոց ըստ Նիկողիմեայ» հավելվածը⁹: Ըստ նշանավոր հայագետ Բ. Սարգիսյանի, նման շփոթմունքն առաջացել է այն ժամանակ, երբ լատին ընդօրինակողը, հանդիպելով պարականոնին առանց խորագրի, ենթադրել է, որ այն Հերոնիմոսի ձեռքով լատիներենի թարգմանված, ապա անհայտացած

³ VI դ. շարադրված «Ֆրանկաց պատմութեան» երկի հեղինակն անդրադարձել է «Գործք Պիղատոսի» գրությանը, սակայն նա չի հիշատակում «Էջբը դժոխք»-ը, ինչից կարելի է ենթադրել, որ պարականոնը, թեև արդեն այս ժամանակահատվածում բավական հայտնի է եղել Արևմուտքում, սակայն դեռևս իր մեջ չի ներառել «Էջբը դժոխք»-ը (տե՛ս Gregory of Tours. History of the Franks, New York, 1916, p. 11):

⁴ Պարականոնի լատիներեն տեքստի հրատարակությունը տե՛ս Codex apocryphus Novi Testamenti. The uncanonical Gospels and other writings, referring to the first ages of Christianity; in the original languages: collected together from the editions of J. Fabricius, A. Thilo, J. Giles, London, 1852.

⁵ Հայերեն ձեռագրերում Պիղատոսի նամակի հասցեատերը Տիրերիոս կայսրն է, սակայն հայերենով պահպանված «Գործք Պետրոսի և Պաղոսի առաքելոց»-ի անհայտ հեղինակը նույնպես հիշատակում է Պիղատոսի՝ Կլավդիոս կայսերն ուղարկված նամակը [տե՛ս Բ. Չրաքեան. Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, հ. Գ, Անկանոն գիրք առաքելականք (այսուհետև՝ Անկանոն գիրք առաքելականք), Վենետիկ, 1904, էջ 12]:

⁶ I. Z b i g n i e w. “The Evangelium Nicodemi in the Latin Middle Ages” in The medieval Gospel of Nicodemus, texts, intertexts, and contexts in Western Europe, Arizona, 1997, p. 48.

⁷ Արդարների՝ դժոխքից ազատագրման մասին ակնարկ կա միայն հայկական «Թուղթ Պիղատոս դատաւորի առ Տիրեր կայսր»-ի մեջ. «Եւ բազում մեռեալք յարեան, որպէս Հրէայք վկայեցին, թէ Ահաւասիկ տեսաք զԱրրահամ և զԻսահակ և զՅակոբ հանդերձ երկոտասան նահապետք» (տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 367):

⁸ «Գործք Պիղատոսի»-ի արևելյան լեզուներով պահպանված տեքստերը հրատարակվել են XX դ. սկզբին: Ասորերեն տեքստը լատիներեն ծանոթագրությամբ և նախաբանով տե՛ս I. R a h m a n i. Apocryphi Hypomnemata domini nostri seu Acta Pilati, Antiqua Versio Syriaca.– Studia Syriaca, vol. 2, Monte Libano, 1908, իսկ դպտերենը՝ E. R e v i l l o u t. Les Apocryphes Coptes.– Patrologia Orientalis, vol. 2, Paris, 1907, pp. 123–173.

⁹ Տե՛ս I. Z b i g n i e w. Նշվ. աշխ., էջ 77:

«Նագովրեցիների ավետարան»-ն է, սակայն առաջաբանում կարդալով նաև Նիկողոզիանոսի անունը՝ վերջինիս է վերագրել ավետարանի գրությունը¹⁰:

Վերոնշյալ խորագրերից բացի, ելնելով այս պարականոն գրվածքի բովանդակությունից, այն անվանում են նաև «Չարչարանքի ավետարան»¹¹:

Նկատենք, որ ստորև կկիրառենք պարականոնի առավել մեծ ճանաչում ունեցող «Գործք Պիղատոսի» անվանումը, իսկ «Էջբըր դժոխք» հասկածին անդրադառնալիս կօգտագործենք պարականոնի «Նիկողոզիանոսի ավետարան» խորագիրը:

«Գործք Պիղատոսի» գրվածքի հեղինակային պատկանելության ու վավերականության հետ կապված հարցերում ուսումնասիրողները միակարծիք չեն: Դեռևս հստակեցված չեն այս պարականոնի նախնական լեզուն¹² և ծագման ժամանակաշրջանը: Գրվածքի հունարենով ու լատիներենով պահպանված «Նախադրություն»-ից տեղեկանում ենք միայն, որ Թեոդոսիոս Մեծի հյուպատոսության տասնյոթերորդ և Վաղենտինոս V-ի իններորդ տարում (տարբեր սվյալներով նրանց կառավարման տարեթվերը տատանվում են 405–420 թթ. միջև) գրությունը հայտնաբերվել ու երբայերենից հունարենի է թարգմանվել Անանիաս կամ Ենիաս անունով նորադարձ հրեայի ձեռքով, ով իրեն անվանում է պրոտեկտոր: Թարգմանիչը, ով, ըստ էության, նաև երկի խմբագիրն է, որն է այլ տեղեկություն չի տալիս ո՛չ իր ծագման, ո՛չ էլ «Գործք Պիղատոսի»-ի հայտնաբերման վայրի մասին:

«Գործք Պիղատոսի»-ն մանրագնին ուսումնասիրության է ենթարկել գերմանացի նշանավոր գիտնական Կ. Տիշենդորֆը՝ քննության առնելով իր ժամանակ հայտնի հունարեն, լատիներեն, ղպտերեն բազմաթիվ ձեռագրեր: Նա ընդարձակ ներածությամբ հրատարակել է բնագրի հունարեն և լատիներեն թարգմանությունները¹³: Գիտ-

¹⁰ Բ. Մարգիսեան. Եղիշէի եւ Չաքարիա կաթողիկոսի «Ի թաղումն Քրիստոսի» ճառերն եւ Նիկողոզիանոսի ավետարանը, Վենետիկ, Ս. Ղազար, 1910, էջ 14:

¹¹ Հայերեն ձեռագրերում նույնպես պարականոնին հիմնականում հանդիպում ենք «Կտակ չարչարանաց» կամ «Պատմութիւն չարչարանաց» անվանումներով:

¹² Քանի որ այս գրությունը հռոմեական պաշտոնական արձանագրություն է, որոշ ուսումնասիրողներ «Գործք Պիղատոսի»-ի նախնական լեզուն համարել են լատիներենը, թեև հետազոտությունները ցույց են տվել, որ այն գրվել է հունարենով (տե՛ս Apocryphal Gospels, Acts and Revelations, trans. by A. Walker, Edinburgh, 1870, pp. XI–XII. Տե՛ս նաև՝ Ph. Schaff. The Ante-Nicene Fathers, vol. VIII, The Writings of the Fathers Down to A.D. 325 The Twelve Patriarchs, Excerpts and Epistles, The Climentia, Apocrypha, Decretals, Memoirs of Edessa and Syriac Documents, Remains of the First Ages, Michigan, 1951, pp. 353–354):

¹³ C. Tischendorf. Evangelia Apocrypha (sec. ed.), Leipzig, 1876, Prolegomena, pp. LIV–LXXXIV. Սույն հրատարակության 210–332 էջերում զետեղված են հունարեն “Acta Pilati”-ի Ս և Բ, իսկ էջ 333–434-ում՝ լատիներեն “Gesta Pilati”-ի Ս և Բ տարբերակները, որոնց հաջորդում են հունարեն “Αναφορά Πιλατού”-ն (435) և “Παράδοσις Πιλατού”-ն (էջ 449), իսկ էջ 471-ից շարադրել է լատիներեն “Vindicta Salvatoris”-ը և այլն:

նականի կարծիքով գրվածքի «Նիկոդիմոսի ավետարան» անվանումը, ամենայն հավանականությամբ, պատկանում է կարողինգյան դարաշրջանին (751–987 թթ.)¹⁴: Կ. Տիշենդորֆը պարականոնի ծագումը վերագրում է II դ. սկզբին՝ հենվելով Հուստինոս Վկայի (100–165 թթ., Ջատ. 1, 35; 48¹⁵) ու Տերտուլիանոսի (շուրջ 155–240 թթ., Ջատ. 21¹⁶) վկայությունների վրա, ըստ որոնց քրիստոնյա այս ջատագույններն արդեն II դ. տեղյակ են եղել նման գրության մասին: Այս տեսակետը, սակայն, միանշանակ չի ընդունվել ուսումնասիրողների կողմից¹⁷: Գերմանացի հայտնի աստվածաբան Ա. Հառնակն առաջ է քաշել մեկ այլ վարկած, ըստ որի՝ Հուստինոս Վկայից ու Տերտուլիանոսից փոխառյալ հատվածները, որոնց չափազանց մեծ կարևորություն է տալիս Կ. Տիշենդորֆը, «Գործք Պիղատոսի»-ից չէին կարող վերցվել: Առաջին դարերի քրիստոնյա ջատագույնները չէին կարող այս անկանոն գրությունն աչքի տակ ունենալ, քանի որ գրվածքի մասին հնագույն վկայությանը հանդիպում ենք միայն Եպիփան Կիպրացու «Յաղագս Հերձուածողաց» երկում¹⁸: Ա. Հառնակի այս տեսակետը ճանաչում է գտել նաև այլ ուսումնասիրողների կողմից, ըստ որոնց սխալմունք է կարծելը, թե Տերտուլիանոսի հիշատակած «Գործք Պիղատոսի»-ն վավերական գրություն է: Նա, ինչպես և Հուստինոս Վկան, կարող էին միայն ենթադրել, որ հռոմեական արխիվում Պիղատոս Պոնտացու կողմից Տիբերիոս կայսերն ուղղված պաշտոնական ուղերձ պիտի պահվեր¹⁹, ինչպես դա ընդունված էր հռոմեական աշխարհում, սակայն իրենց ձեռքի տակ նման փաստաթուղթ չեն ունեցել:

Ըստ մեկ այլ հետազատողի՝ ֆրանսիացի գիտնական Ա. Մորիի, երկի թարգմանչի Անանիաս կամ Ենայիաս անվանումը հունական ծագում ունի: Պարականոնի թարգմանիչը ներկայանում է որպես քրիստոնեություն ընդունած հրեա: Նրա կարծիքով երկի թարգմանիչը եբրայերենին չի տիրապետել, թեև «Նախադրություն»-ում նշում է, թե երկը հունարենի է թարգմանել հենց այդ լեզվից: Քրիստոնեություն ընդունած հրեաներին թարգմանիչը վերագրում է լատինական այնպիսի անուններ, որոնք հրեաների մեջ առհասարակ կիրառություն չեն ունեցել²⁰: Միաժամանակ այս անկա-

¹⁴ Բ. Մարգիսեան. նշվ. աշխ., էջ 12–13:

¹⁵ P h. S c h a f f. The Ante-Nicene Fathers, vol. I, The Apostolic Fathers, Justin Martyr, Apology 1, 35, pp. 175, 179.

¹⁶ T. B i n d l e y. The Apology of Tertullian for the Christians, chap. 21, Oxford, 1890, p. 44.

¹⁷ H. C o w p e r. The Apocryphal Gospels and Other Documents Relating to the History of Christ, London, 1870, p. 228.

¹⁸ Ի»ö A. H a r n a c k. Die Chronologie der altchristlichen Literatur bis Eusebius, Leipzig, 1897, I Band, S. 603–611.

¹⁹ J. B. L i g h t f o o t (bishop of Durham). The Apostolic Fathers, vol. 2, London, 1889, p. 55.

²⁰ Բ. Մարգիսեան. նշվ. աշխ., էջ 12: Մրա մասին ավելի մանրամասն տե՛ս De l'vangile de Nicodème, de la date de cet ouvrage et des circonstances auxquelles on peut et attribuer la redaction.–

նոն երկում հաճախ ենք հանդիպում վերանշակված հազգադական²¹ ավանդությունների, ինչից կարելի է եզրակացնել, որ հեղինակը քաջատեղյակ է եղել հրեական կրոնական ու աշխարհիկ գրականությանը, թեև երբևէ Հրեաստանում չի ապրել²²: Ըստ Ա. Մորիի տեսակետի՝ պարականոնի առաջին խմբագրությունը կատարվել է V դ. սկզբին:

Հետաքրքրական է նաև պարականոնի հավանական թարգմանչի մասին Բ. Սարգիսյանի դիտարկումը: Ըստ հայագետի, այն սուրբ Եպիփան Կիպրացին է (315–403 թթ.)²³: Այս եզրակացությունը Բ. Սարգիսյանը հանգել է նկատի ունենալով այն հանգամանքը, որ թարգմանչի նշած ժամանակն ու հրեական ծագում ունենալը համապատասխանում են Ղուկիանոս անապատականի կողմից նրա քրիստոնեությունը ընդունելուն ու մկրտվելուն²⁴: Եպիփան-ը մկրտության ժամանակ հեղինակի ստացած հունական անունն է, իսկ նրա հիշատակած Անանիաս-ը մինչև մկրտվելն ունեցած նախկին հրեական անվանումն է: Եպիփանը, ըստ ուսումնասիրողի, ի մի է բերել Պիղատոսի ցաքուցրիվ հիշատակարանները և դրանց համար առանձին առաջաբան ու վերջաբան գրել: Նա նաև մարգարեներից ու նահապետներից բազմաթիվ մեջբերումներ է արել՝ դրանցով հարստացնելով Հիսուսի աստվածությունը վկայող բացահայտ փաստարկները, որոնք գուցե և նախկինում գոյություն չեն ունեցել:

«Պիղատոսի Գործք»-ը, ինչպես առհասարակ պարականոն գրվածքները, սնվել է սուրբգրային պատմություններից, միաժամանակ համեմվել զանազան այլ պատումներով, սակայն պատմական ինչ-ինչ տեղեկություններ պարունակելու և Նոր Կտակարանի հետ ունեցած սերտ աղերսների շնորհիվ այն մեծ ժողովրդականություն է

Revue de Philologie, de littérature et d'histoire anciennes, vol. II, Paris, 1847, n. 5, par A. Maury, pp. 428–449.

²¹ Հազգադան թալմուդական գրականություն է, որ ներառում է հրեական ավանդության մի մասը: Այն պարունակում է գրույցներ, ասացվածքներ, կրոնական ու բարոյական խրատներ, պատմական իրադարձություններ և առասպելներ, որոնք նախատեսված են դյուրին դարձնելու օրենքի ընկալումը (տե՛ս <http://dictionary.reference.com/browse/haggadah>):

²² H. Cowper. Նշվ. աշխ., էջ XXXVIX: Պարականոնի հեղինակը «հրեացրել» է անգամ Պիղատոսի կնոջը. «Գիտե՞ք, զի կին իմ աստուածապաշտ, և Հրեայ է, իբրև զձեզ» (տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 317):

²³ Եկեղեցու հայրերից ոչ ոք այնքան քաջատեղյակ չի եղել հրեական գրին ու ավանդույթներին, որքան սուրբ Եպիփան Կիպրացին: Ասվածի լավագույն վկայություններն են նրան վերագրվող 36 ճառերը, որոնք հազեցած են հրեական ավանդությունների մանրամասն նկարագրություններով (տե՛ս Սուրբ Եպիփան Կիպրացի. Ճառք, աշխ. Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2013, էջ 203–207):

²⁴ Հ. Քյոսեյան. Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV–VIII դդ.), Երևան, 2007, էջ 162: Եպիփան Կիպրացին ծնունդով հրեա է, ով 310–320 թթ.՝ 16–20 տարեկան հասակում մկրտվել ու դարձել է քրիստոնյա:

վայելել: Այս գրվածքը, թեև ճանաչվել է որպես անկանոն գրություն, երբևէ չի ընդգրկվել *ՆՉ Գելասիոս I-ին պապին (492–496 թթ.) վերագրվող արգելված գրքերի Դեկրետում* (“*Decretum pseudo-Gelasianum*”)²⁵, *ՆՉ Նիկեոսի պատրիարքի (806–815 թթ.) «Մամանակագրության»-ը կցված պարականոնների շարքում*²⁶, և *ՆՉ էլ անկանոն գրքերի հայկական ցանկերում (ինչպես օրինակ՝ Սամուել Անեցու հիշատակած նեստորական գրքերի ցանկն ու Մխիթար Այրիվանեցու կազմած ծածուկ գրքերի ցուցակը*²⁷):

Պարականոնի վավերական լինելու տեսակետը պաշտպանողները հենվում են այն հանգամանքի վրա, որ այստեղ տեղ գտած իրադարձությունները, այն է՝ հրեա քահանաների, իշխանների ու Պիղատոսի ներկայությամբ իրականացված Հիսուսի դատավարությունը, ապա Նրա հարությանը հաջորդած եղելությունների երկար ու մանրագնին քննությունը, կարծես թե, համահունչ են ինչպես նորկտակարանյան ավանդությանը, այնպես էլ պատմական տվյալներին: Լիովին ընդունելի է նաև այն, որ Հիսուսին արդարացնելու մղումով դատավարությանն ու հետագա քննարկումներին մասնակից լինեին նաև Նրա ծածուկ հետևորդները, ինչպես օրինակ՝ Հովսեփիոս Արիմաթացին, Նիկողիմոսը, Կոռնելիոս հարյուրապետն ու պահապան զինվորները, հարություն առած Ղազարոսը, բժշկված անդամալույծը, կաղերն ու կույրերը, որոնք բոլորն էլ դարձել էին Հիսուսի հրաշագործությունների անմիջական վկաները²⁸: Պիղատոսը, մի կողմից համոզված լինելով, որ Հիսուսն անմեղ է, մյուս կողմից վախենալով հռոմեական զորքի ամբաստանություններից՝ ըստ հռոմեական օրենսդրության, պիտի որ դիվանական գործ կազմեր, այնտեղ ի մի բերեր բոլոր հարցաքննություններն ու վկայությունները և ինքնագիր նամակով այն հղեր Տիբերիոս կայսերը: Այս դիվանական գործն էլ հետագայում ստացել է «Յիշատակարանք Պիղատոսի» անվանումը²⁹: Այս տեսության կողմնակիցները պարականոնն արժևորում են նախ և առաջ այն հանգամանքով, որ գրվածքը հնարավորություն էր տալիս քրիստոնյա ջատագովներին վկայակոչելու մի պաշտոնական փաստաթուղթ, որը չի գրվել նախանձախնդիր քրիստոնյայի ձեռքով, ով փորձել է ցույց տալ իր դավանան-

²⁵ The Apocryphal New Testament, by Elliot J. K., Oxford, 1993, pp. XXIII–XXIV.

²⁶ Nicephori Archiepiscopi Constantinopoli tam opuscula Historica, edited by Carolvs de Boor, Leibzig, 1880, pp. 134–135.

²⁷ Հայոց մեջ հայտնի արգելված գրքերի ցուցակների մասին մանրամասն տե՛ս Մ. Մա մյ ա ն. Գիր տղայութեան ավետարանը.– «Բանբեր Մատենադարանի», հ. 22, Երևան, 2015, էջ 334–349:

²⁸ Բ. Մարգիսեան. նշվ. աշխ., էջ 18: Դատավարության գործընթացը ներկայացնելիս ավետարանիչները չեն անդրադարձնում Հիսուսի հրաշագործություններին: Պարականոնի հեղինակը սրանց հավելում է նաև այնպիսի հրաշքներ (դրոշակների խոնարհումն ու երկրպագությունը Հիսուսին, Պիղատոսի նվիրակի հանկարծակի քրիստոնյա դառնալն ու Հիսուսին հետևելը և այլն), որոնք պիտի վկայեին Հիսուսի գերբնական էության մասին:

²⁹ Նույն տեղում, էջ 19–20:

քի ճշմարտացիությունը, այլ կազմվել է ըստ հեթանոս դրածո պաշտոնյա-ականատեսի հուշերի արձանագրության: Գրվածքի հեղինակը չի ճանաչել իրական Աստծուն, բայց լսել ու տեսել է Աստծու Որդուն³⁰: Հետագայում «Գործք Պիղատոսի»-ն վերածվել է պաշտպանական կարևոր գենքի, որ օգտագործվել է քրիստոնյաների հալածանքների ժամանակ՝ հավաստելու, որ Տիրերիոս կայսրն ինքը եղել է քրիստոնյաների կողմնակիցը³¹:

Պարականոնի վավերական լինելը փաստարկվում է նաև նրանով, որ քրիստոնյաների դեմ Մաքսիմիանոս կայսեր (235–238 թթ.) հալածանքների ժամանակ շրջանառության մեջ է դրվել «Գործք Պիղատոսի» նույնանուն կեղծ գրությունը³², ինչի մասին վկայություն ունի Եվսեբիոս Կեսարացին (265–340 թթ.). «Յօդեցին ապա և յիշատակարան ինչ Պիղատոսի գրատակնքոյն Փրկչին մերոյ՝ լի հայհոյութեամբ զՔրիստոսէ. և իբրև ի կամաց անտի թագաւորին առաքեցին ընդ ամենայն գաւառս իշխանութեան նորա, հրամայեալ գրով եթէ յամենայն տեղիս ի քաղքաս, ի շէնս, ի յագարակս դիցեն զայն հրապարակաւ յայտնի, և զի ի դպրոցս ուր ուսանն մանկունք զդպրութիւն, փոխանակ ուսման յայն թնակոխեսցեն, և յուշի կալեալ զայն արտասանեսցեն»³³: Եթէ պարականոնն արդեն III դ. գոյություն չունենար ու այդքան մեծ ժողովրդականություն չվայելեր, ապա հազիվ թէ այն կեղծեին:

«Գործք Պիղատոսի» պարականոնի հայերեն տարբերակն Արևմուտքին հայտնի է առավելապես նշանավոր հայագետ Ֆ. Կոնիբերի թարգմանության շնորհիվ: Փարիզի ազգային թանգարանի - 110 (1194 թ.) և - 178 (XII դ.)³⁴ Երուսաղեմի Մատենադարանի - 1ա (1417 թ.), Վենետիկի Մատենադարանի - 104 (XV–XVI դդ.)³⁵ ձեռագրերում պահպանված հնագույն տեքստերի հիման վրա մեծանուն գիտնականը, առանց ներկայացնելու հայերեն բնագիրը, գրվածքը հրատարակել է հունարեն ու լատիներեն

³⁰ G. Sluter. Նշվ. աշխ., էջ 40:

³¹ Նույն տեղում, էջ 29–30:

³² H. Milman. The History of Christianity, from the Birth of Christ to the Abolition of the Paganism, vol. 2, London, 1840, p. 289.

³³ Եվսեբիոսի Կեսարացույ Պատմութիւն Եկեղեցւոյ, թարգմ.՝ Հ. Ա. Վ. Ճարեանի, Վենետիկ, 1877, էջ 678–679:

³⁴ Manuscrits Arméniens de la Bibliothèque Nationale de la France, Catalogue, par. Knvorkian R. H., Tnr-Stpanian, avec le concours de Outtier B. et de Tnr-Vardanian, Paris, 1998, pp. 346, 592 («Յիշատակարանք, որ եղեն առաջի Պոնդացոյ Պիղատոսի՝ վասն խաչելութան տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի» և «Յիշատակարանք, որ եղեն վասն Քրիստոսի առաջի Պոնտացոյ Պիղատոսի իշխանի Հրէաստանի»):

³⁵ Տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, տպագրված է Վենետիկի Մխիթարյան Միաբանության Մատենադարանի - 104 ձեռագրից, Ոսկեփորիկ, ԺԶ դ., գրիչ՝ Կարապետ Հիզանցի:

համեմատական թարգմանություններով (1896 թ.)³⁶: Երկու տարի անց, 1898 թ. Մխիթարյան միաբանության հայրերը հինգ ձեռագրերի հիման վրա (այդ թվում՝ Կոնիբերի օգտագործածները) հրատարակել են «Յիշատակարանք Պիղատոսի», «Պատմութիւն վասն թաղմանն եւ յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ» և «Թուղթ Պիղատոսի առ Տիրեր» (երկու օրինակներով) շարքը, որոնք մաս են կազմում մեկ ամբողջական պարականոնի³⁷: Հայերեն «Գործք Պիղատոսի» երկը ամբողջական հրատարակության է պատրաստում ֆրանսիացի հայագետ Բ. Ութիեն:

Պարականոնի հայերեն թարգմանության ժամանակը հստակեցված չէ, սակայն հաշվի առնելով միջնադարում գրվածքի ունեցած մեծ ժողովրդականությունը, Ֆ. Կոնիբերը ենթադրել է, որ հայերեն նախնական թարգմանությունը կատարվել է հունարեն³⁸ Ա խմբագրությունից³⁹ հավանաբար 650-ական թվականներին⁴⁰:

«Գործք Պիղատոսի»-ի հայերեն թարգմանությունն ու հետագայի խմբագրություններն աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով: Դրանք արտացոլում են պարականոնի նախնական տարբերակը, որից բացակայում է հունարեն ու լատի-

³⁶ *St' u F. Conybeare. "Acta Pilati" in Studies in Biblical and Patristic Criticism, or Studia Biblica et Ecclesiastica, vol. 4, by Gorgias press, 2006.*

³⁷ *Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 313, 345, 359, 379:*

³⁸ *Թեև ուսումնասիրողներից շատերը հակված են այն տեսակետին, որ այս պարականոնը հայերեն է թարգմանվել հունարենից, անվանի ասորագետ Լ. Տեր-Պետրոսյանն աստրերենից կատարված թարգմանությունների շարքում նշում է նաև «Գործք Պիղատոսի» պարականոնը, որը, նրա համոզմամբ, թեև գրվել է հունարենով, սակայն հայերեն է թարգմանվել աստրերենից (տե՛ս Լ. Т е р - П е т р о с я н. Сиро-Армянские литературные связи в IV–V вв. СПб.–Ереван, 2015, с. 21, 24): Այս տեսակետը պաշտպանողները հաշվի են առնում այն հանգամանքը, որ հայերեն թարգմանությունը մեզ է հասել տարբեր խմբագրություններով, որոնք ոչ միայն հունականից, այլ նաև միլյանցից են մեծապես տարբերվում, ուստի հավանական է կարծել, որ հայերեն թարգմանություններից մեկը կատարվել է ղպտերեն կամ աստրերեն լեզուներից:*

³⁹ *Գրվածքը պայմանականորեն Ա՝ նախնական և Բ՝ հետագայի խմբագրությունների է բաժանել Կ. Տիշենդորֆը (տե՛ս http://folk.uio.no/lukeb/books/apocrypha/Gospel_of_Nicodemus.pdf, Gospel of Nicodimus", or "Acts of Pilate", from The apocryphal New Testament, trans. and notes by M. R. James, Oxford, Clarendon Press, 1924):*

⁴⁰ *F. Conybeare. Նշվ. աշխ., էջ 61–64: Այլ կարծիքի է Նիկողիմոսի ավետարանի արդի ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունեցող Բ. Ութիեն, ով պարականոնի թարգմանության ժամանակը համարում է V դ., երբ հայոց գրերի ստեղծվելուց անմիջապես հետո մեծ թափ առավ ոչ միայն Աստվածաշնչի, սուրբգրային մեկնությունների, այլ նաև աստվածաշնչյան թեմաներով գրված տեքստերի թարգմանությունը (տե՛ս B. Outtier. The Armenian and Georgian Versions of the Evangelium Nicodemi.– Apocrypha. Revue internationale des littnatures apocryphes 21, Turnhout, 2010, pp. 49–55):*

ներեն տեքստերում առկա «Նախադրություն»-ը⁴¹, և ի տարբերություն վերջինների՝ հայերեն թարգմանության մեջ առկա հավելումները պատմական իրադարձություններ չեն հաղորդում:

Գրվածքը միայն հայկական գրավոր ավանդության մեջ և մասնավորապես՝ հետագայի խմբագրություններում է, շատ հաճախ վերագրվում է Հակոբոս Տեառնեղբորը՝ «Արդարն Յակոբ կամ Յակոբոս եղբայր Տեառն, որ և Աստուածեղբայր կոչեցեալ, առաջին եպիսկոպոս աստուածակոխ քաղաքին Երուսաղէմի»⁴²: Հետագայի այս վերամշակված տեքստերը սովորաբար մեծ տարբերություններ ունեն հատկապես հրեաների՝ Հիսուսի դեմ մեղադրանքներ ներկայացնելու հատվածում: Այսպես՝ Հիսուսի դատավարության ժամանակ Նա մեղադրվում է հրաշագործությունները սատանայական հնարքներով իրագործելու մեջ. «Ասէ Պիղատոս. այդ բանդ ոչ իցէ դիւահարի, այլ զօրութեամբ ասկղիպաւ և ազդիպաւ առնէ զամենայն»⁴³ (լատ.՝ Aesculapius, հուն.՝ Ασκληπιός): Ասկղիպիոս-ը հռոմեական դիցաբանության մեջ բժշկության աստվածն էր, իսկ ինչ վերաբերում է Ազդիպիոս աստծուն, ապա նրա մասին հիշատակությանն անվավերականում առհասարակ հանդիպում ենք միայն հայերենով պահպանված գրվածքներում:

«Նիկողոզիմոսի ավետարան» անվանումը բնորոշ չէ հայերենով պահպանված պարականոնին, թեև որոշ ձեռագրերում այն վերագրվում է Նիկողոզիմոսին [ինչպես օրինակ՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) - 993, 1521, 1524]: Առհասարակ, ավետարան եզրի կիրառությունը հայ պարականոն գրականության մեջ շատ հազվադեպ է հանդիպում: Գրիչները խուսափում են ավետարան բառի կիրառումից՝ օգտագործելով պատմեալ է, հավաքեալ է, ասացեալ է եզրերը՝ ավետարանի՝ բարի լուրի իմաստը թողնելով որպես սուրբգրային մենաշնորհ: Թերևս այս առումով բացառություն է ՄՄ - 1521 ձեռագրում հանդիպող գրվածքը. «Պատմութիւն Չարչարանացն Տեառն և վկայութեան, զոր վրկայեաց առաջի Պոնտացոյ Պիղատոսի Յաւետարանէն Նիկողոզիմոսի (ընդգծումը մերն է - Մ. Մ.) գաղտաշակերտին»⁴⁴:

⁴¹ Այս առումով բացառություն է ՄՄ, - 4803 ժողովածուն, որտեղ «Նախադրություն»-ը ներկայացված է որպես ձեռագրի հիշատակարան (էջ 243ա):

⁴² Հակոբոս Տեառնեղբոր կերպարը նշանակալից դերակատարություն է ունեցել հատկապես առաջին դարերում գրված հուդա-քրիստոնեական պարականոն ավետարաններում (տե՛ս Մ. վրդ. Աւգերեան. Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, որ կան ի հին Տոնացոյցի եկեղեցոյ Հայաստանեայց, Վենետիկ, 1814, էջ 247): Հակոբոս Տեառնեղբոր անունով է պահպանվել նաև հայ միջնադարում մեծ ժողովրդականություն վայելող մեկ այլ՝ «Մանկութեան աւետարան»-ը: Պատահական չէ, որ նա համարվում է հայերի ավանդական առաքյալը, թեև հայտնի է, որ նա երբեք Հայաստանում չի քարոզել:

⁴³ Տե՛ս ՄՄ, - 712, էջ 55բ, նաև՝ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 314:

⁴⁴ Տե՛ս ՄՄ, - 1521, Ճառընտիր, 1406 թ., էջ 352բ-355ա:

«Գործք Պիղատոսի»-ի հետագա խմբագրություններում ի հայտ են գալիս քրիստոսաբանական այնպիսի գաղափարներ, որոնք, որպես քրիստոնեական վարդապետության կարևորագույն հիմնասյուներ, ձևավորվել են միայն V դ. հետո: Այսպես օրինակ՝ պարականոնի հետագա խմբագրություններում է տեղ գտել նաև Մարիամի անադարտ հղության մասին ուսմունքը: Ի թիվս այլ մեղքերի, երբ հրեաները Հիսուսին մեղադրում են նաև անօրինական կապից («ի պոռնկութենէ») ծնվելու մեջ⁴⁵, դրան ի պատասխան մի խումբ «երկիրդածք» հրեաներ «աղաղակէին և ասէին միաբան, մեք չասեմք զդա ի պոռնկութենէ ծնեալ, այլ զիտեմք որ մայր դորայ Մարիամ խօսել տուաւ Յովսէփայ ի ժամ ծնընդեան նրա բազումք վկայեցին զնա թէ ի կուսութենէ (ընդգծումը մերն է – Մ. Մ.) ծնեալ եղև անարատ և անապական»⁴⁶, այնինչ ավելի վաղ խմբագրությունում նույն մեղադրանքներին հրեաները պատասխանում են. «Այդ բանդ ձեր չէ ճշմարիտ, զի հարսանիք (ընդգծումը մերն է – Մ. Մ.) լեալ են, որպես դորա ասեն ազգակիցք ձեր»⁴⁷: Դրանք բովանդակում են նաև այնպիսի պատմություններ, որոնք հետաքրքրական են հայ միջնադարյան իրականության մեջ հայտնի մի շարք այլ պարականոնների ուսումնասիրման տեսանկյունից⁴⁸: Հետագայի խմբագրության լավագույն օրինակներից է XVI դ. ընդօրինակված ՄՄ - 712 ձեռագրում պահպանված «Պատմություն Յիշատակարանաց»-ը⁴⁹:

«Գործք Պիղատոսի»-ի հայերեն թարգմանության մաս կազմող «Պատմութիւն վասն թաղմանն եւ յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ» մասը բառացի կրկնում

⁴⁵ Պոռնկությունից կամ մեղքից ծնվելու մեղադրանքները որևէ կերպ արտացոլված չեն ավետարաններում, հեղինակը, հավանաբար, ծանոթ է եղել Հիսուսի «Մանկութեան աւետարան»-ին, որտեղ Մարիամն ու Հովսէփը հրեա քահանաների կողմից մեղադրվում են արտաամուսնական կապ ունենալու մեջ և Փորձության ջրի միջով անցնելով՝ ապացուցում են իրենց անմեղությունը:

⁴⁶ Տե՛ս ՄՄ, - 712, էջ 59բ–60ա:

⁴⁷ Տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 319:

⁴⁸ Տե՛ս Հակոբոս Տեառնեղբորը վերագրվող «Կտակգիրք»-ը. «Գիրք գրգուկս այս պատմէ նախ վասն գալստեանն Յիսուսի Յերուսաղէմ, երկրորդ՝ վասն չարչարանացն, որ կրեաց առաջի Պիղատոսի դատաւորի եւ քահանայապետիցն Աննայի և Կայիափայ, ասացեալ երանելոյն Յակոբայ Տեառն եղբորն» (այսուհետև՝ Կտակգիրք), Կ. Պոլիս, 1710, էջ 9–112: Այս հնատիպ գիրքը, որ ներառում է «Յիշատակարաններ»-ի հետագայի խմբագրություններից մի օրինակ, պարունակում է նաև «Մարիամի ողբը» (հմմտ. ՄՄ, - 2339՝ «Ողբ Աստուածածնի ընդդէմ խաչին-Աստուածածին կոյսըն Մարիամ...»): Հրատարակվել է նաև «Կտակգրք»-ի չափածո տարբերակը՝ «Յաղագս որպիսոյան Չարչարանաց և մահուան և Խաչելութեան Փրկչին մերոյ» վերնագրով, Կ. Պոլիս, 1722, էջ 3–108: Տե՛ս նաև՝ Ն. Ուկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան. Հայ գիրքը 1512–1800 թվականներին, Երևան, 1988, էջ 200, 219, 294, 386, 675, Ա. Ղազիկյան. Հայկական նոր մատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի, հ. 1, Երևան, 2013, էջ 870–875:

⁴⁹ Տե՛ս ՄՄ, - 712, Ժողովածու, XVI դ., էջ 49ա–100բ:

է հունարեն բնագիրը (“Διηγησεις περι του παθουσ του κυριου ημων Ιησου Χριστου και θησ αγιασ αυτου Αναστασιασ”), սակայն վերջինիս մանրագիր երկրորդ խորագիրը բացակայում է հայերենում⁵⁰:

«Գործք Պիղատոսի»-ն հիմնականում վերաբերում է Հիսուսի դատավարությանը և հարությանը հաջորդող իրադարձություններին, սակայն ինչպես կարելի է ենթադրել գրվածքի անվանումից, այստեղ առաջնային դերակատարություն ունի և Պիղատոսը: Պարականոն արտացոլում է նրա կենսագրության, վախճանի, ինչպես նաև Հիսուսի դատավճռի կայացման մեջ ունեցած երկիմաստ դերակատարության հանդեպ աճող հետաքրքրությունը⁵¹: Առաջին քրիստոնյաները բարյացակամ վերաբերմունք են ունեցել Պիղատոսի նկատմամբ, նույնիսկ II դ. քրիստոնյա ջատագով Տերտուլիանոսը (155/165–220/240 թթ.) նրան անվանել է «քրիստոնյա ըստ համոզմունքի»⁵²: Աստծո Որդուն մահվան դատապարտող Պիղատոսի գղջացող կերպարը ձևավորվել է II դ. ու նշանակալից դերակատարություն ստացել հատկապես պարականոն գրականության մեջ⁵³: Որոշ քրիստոնյա համայնքներում, ինչպես, օրինակ, Եթովպական եկեղեցում, Պիղատոսն ու իր կինը սրբադասվել են⁵⁴:

Պոնտացի Պիղատոսի առասպելախառն կերպարը լավագույնս ներկայացված է «Գործք Պիղատոսի»-ի մաս կազմող «Թուղթ Պիղատոսի դատաւորին առ Տիբերեայ կայսրն» գրվածքում⁵⁵, մի նամակագրություն, որի մասին հիշատակում է նաև «Եկեղեցական պատմութեան» հեղինակ Եվսեբիոս Կեսարացին. «Եւ արդ՝ ի հռչակել ընդ ամենայն Պաղեստին յարութեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, Պի-

⁵⁰ Բ. Սարգիսեան. նշվ. աշխ., էջ 16:

⁵¹ J. Elliot. Art and the Christian Apocrypha, by D. R. Cartlidge, London, 2001, p. 5.

⁵² T. Bindley. նշվ. աշխ., էջ 44:

⁵³ Б. Деревенский. Иисус Христос в документах истории. СПб., 2001, с. 22.

⁵⁴ Քրիստոնյա արարների, դպրիների ու եթովպացիների մոտ լայն շրջանառություն է ունեցել «Պիղատոսի վկայաբանություն»-ը պարականոն գրվածքը, ըստ որի՝ Պիղատոսն իր քրիստոնեական հավատի համար երկու անգամ է խաչվել՝ մեկ անգամ հրեաների, մեկ ուրիշ անգամ՝ Տիբերիոսի կողմից, և իր կնոջ ու երկու երեխաների հետ թաղված է Հիսուսի գերեզմանի կողքին: Պիղատոսի առասպելական կերպարի մասին առավել մանրամասն տե՛ս T. Gull. “The Legendary Fate of Pontius Pilate” in *Classica et Mediaevalia*.– Danish journal of Philology and History, ed. by Tennes Bekker-Nielsen Marianne Pade, vol. 61, Copenhagen, 2010, pp. 151–176.

⁵⁵ Տե՛ս Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 377, նաև՝ Խ. Հովհաննիսյան. Թուղթ Պիղատոսի Դատաւորի գոր յետ խաչելութեանն Քրիստոսի գրեաց առ Տիբերիոս կայսրն Հռոմայ.– «Հանդէս ամսօրեայ», թիւ 9, սեպտեմբեր, Վիեննա, 1894, էջ 278–280: Տարբնթերցումներով Հ. Թումանյանցի հեղինակությամբ լույս է տեսել նաև «Բանասէր» հանդեսում, պր. Ա, հ. 3, Փարիզ, 1901, էջ 189–191, իսկ հողվածի շարունակությունը՝ «Պիղատոսի մահը», հրատարակվել է նույն հանդեսում, 1902 թ. նոյեմբեր ամսին (թիւ 11), հ. 4, էջ 337–340 և «Բազմավէպ»-ի թիւ 16 համարում, Վենետիկ, 1857, էջ 279–285:

դատոս գրեալ առ Տիբեր կայսր յայտ առնէր...»⁵⁶: Պիղատոսի ու Տիբերիոս կայսեր այս մտացածին թղթակցությունը թարգմանվել է հայերեն ու, էլնելով գրվածքը պարունակող բազմաթիվ հայերեն ձեռագրերի առկայությունից, մեծ տարածում է ունեցել նաև միջնադարյան Հայաստանում: Ընդ որում, հայկական գրավոր ավանդության մեջ «Թուղթ Պիղատոսի»-ն շատ հաճախ հանդիպում է որպես «Գործք Պիղատոսի»-ից անկախ միավոր: Ընդհանուր առմամբ, «Թուղթ Պիղատոսի»-ի հայերեն թարգմանությունը կրկնում է պարականոնի այլալեզու ավանդությունները, սակայն, ի տարբերություն վերջինների, Պիղատոսի կերպարն այստեղ, կարծես թե, այնքան էլ դրական նկարագիր չունի:

Տիբերիոս կայսերն ուղղված թղթին սովորաբար հետևում է Պիղատոսի մահվան մասին պատմությունը⁵⁷: Ջանազան ավանդություններում Պիղատոսի մահվան մասին պատմվող առասպելները ստացել են տարբեր նրբերանգներ⁵⁸: Հետաքրքրական են հայկական ավանդության մեջ տեղ գտած այն պատումները, ըստ որոնց ծովը նետվելով Պիղատոսն ինքնասպանության փորձ է անում. «Եւ զՊիղատոս ետ կապել կրկին երկաթի կապանօք և արկանել անուր ի պարանոց նորա և կապել կրկին շղթայիւքն և յղել ի Հռոմ: Եւ նաւորդացն արարեալ զհրամանս դատաւորին նաւ արկանել և տանէին ի Հռոմ: Եւ ի միում գիշերի զմտաւ ածեալ Պիղատոսի երկուցեալ ի յարքայէն Տիբերայ թէ որպէս կորուցէ զնայ յարուցեալ ընկեց զինքն ծովն և նաւավարացն իմացեալ բռութեամբ հարին զկապանաց շղթայիցն զհետ մտեալ ի խորու ի ծովուն կապանօք հանին զնայ ի վեր և զգուշութեամբ պահեալ տարեալ հասուցին զնայ ի Հռոմ քաղաք»⁵⁹: Մի ուրիշ տեղ՝ «Եւ նոյն ժամայն առեալ Պիղատոս նաւեցին ի Հռոմ, և նա զանձն իւր ընկենոյր ի ծով, և խեղդամահ սատակեցաւ, և զԹուղթս զայս եթող վասն փառացն Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»⁶⁰: Պիղատոսի ինքնասպանության մասին է գրում նաև XII–XIII դդ. պատմիչ Մխիթար Անեցին. «Եւ

⁵⁶ Տե՛ս Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ, էջ 79: Այս նամակագրությունը ոչ բոլոր ավանդություններին է հասնուկ, այսպես՝ Վ. Ռայթի դեռևս XIX դ. երկրորդ կեսին հրատարակած ասորերեն պարականոն ավետարանների շարքում նշվում է միայն Հերովդեսի ու Պիղատոսի նամակագրությունը (տե՛ս W. W r i g h t. Syriac Apocrypha, Edinburgh, 1865, pp. 12–17): Տիբերիոս կայսերը նամակ ուղարկելու Պիղատոսի որոշման մասին հետաքրքիր մանրամասներ տե՛ս ՄՄ, - 712, էջ 89ա–91ա-ում:

⁵⁷ Պիղատոսի մահվան մասին պատմությունները (հուն.՝ ‘Παράδοσις Πιλατοῦ’, լատ.՝ ‘Anaphora Pilati’) ձեռագրերում հանդիպում են առանց խորագրերի:

⁵⁸ Հռոմի Գայոս (Կալիգուլա) կայսեր օրոք (37–41 թթ.) Պիղատոսի ինքնասպանության մասին է հիշատակում Եվսեբիոս Կեսարացին, այնինչ Հովսեփիոս Փլավիոսը իր «Հրեական հնություններ» երկում 36 թ. Հուդան լքելուց հետո Պիղատոսի մասին որևէ այլ տեղեկություն չի հայտնում (տե՛ս л И о с и ф Ф л а в и й. Иудейские древности, т. 1. СПб., 1990 (XVIII, 4.2), с. 223):

⁵⁹ ՄՄ, - 712, էջ 97բ–98ա:

⁶⁰ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 380:

մինչ նաւէին ի վերայ Ովկիանոսի, ծանուցեալ զսաստիկ սպառնալիս կայսերն, անձամբ արար զվրեժ անձին իւրոյ. ընկեց զինքն ի խորս ալեացն և հեղձամաղձուկ եղեալ, սուզեցաւ յատակս անդնդոց»⁶¹: Այս պատմվածքը, ինչպէս նաև «Գործք Պիղատոսի»-ի հայերէն հետագա խմբագրությունների մաս կազմող Աբգար թագավորի ու Տիրերիոս կայսեր միջև եղած նամակագրությունը ներկայացնելիս Մխիթար Անեցիին որպէս հիմնական աղբյուր նշում է Մովսէս Խորենացու «Հայոց պատմություն»-ը, որից նա երբեմն օգտվում է բառացի քաղաղությամբ: Հետաքրքրական է, որ վերոնշյալ երկի համապատասխան հատվածում (որի գրության համար իր հերթին հիմք է հանդիսացել Եվսեբիոսի երկը) բացակայում է Պիղատոսի ինքնասպանության մասին տեղեկությունը⁶²:

Բացի Պիղատոսի ինքնասպանությանն առնչվող պատմություններից, հայկական ավանդության մեջ տեղ են գտել նաև այնպիսի առասպելներ, որոնք պատմում են Պիղատոսի սպանության մասին: Մի տեղ Տիրերիոսը հրամայում է գլխատել Պիղատոսին⁶³, իսկ ըստ «Կտակգրք»-ի՝ Պիղատոսը քարկոծվում է. «Իսկ անօրէն Պիղատոսն հրամայեաց արքայն քարկոծ առնել և հանել արտաքոյ քաղաքին ամենայն բազմութիւն քաղաքին, քարկոծեցին զնայ և ընկեցին կերակուր գազանաց և թռչնոց երկնից և այնպէս մահուամբ սատակեցաւ ամբարիշտն Պիղատոս հանդերձ խորհրդակցութեամբն սատանայի անօրէն խորհրդով»⁶⁴:

Ինչ վերաբերում է «Նիկողոզիմոսի ավետարան»-ի Արևմուտքում մեծ ժողովրդականություն վայելած «Էջբը դժոխք» հատվածին, դրա ծագման վերաբերյալ ևս ուսումնասիրողների կարծիքները տարանջատվում են: Ըստ որոշ հետազոտողների՝ պարականոնի առաջին և երկրորդ հատվածները պատկանում են միևնույն հեղինակի գրչին: Սակայն այս տեսակետը պակաս ընդունելի է, քանի որ երկու հատվածների միջև ունի տարբերությունները բավական շատ են: Ըստ Ա. Հառնակի՝ «Էջբը դժոխք»-ը քաղված է II դ. գրված մի այլ պարականոնից՝ «Պետրոսի քարոզություն»-ից («Κήρυγμα Πετρού»)՝⁶⁵: Անվանի ստվածաբանը ենթադրում է, որ այս գրվածքը կարող է հետագայի հավելված լինել, սակայն քիչ հավանական է, որ այն կրի գնուտիկության ազդեցությունը: Ա. Մորին «Նիկողոզիմոսի ավետարան»-ի «Էջբը դժոխք»-ը

⁶¹ Մխիթար Անեցի. Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 84–85:

⁶² Մովսէս Խորենացի. Հայոց պատմութիւն, աշխ. Մ. Աբեղյանի, Մ. Հարությունյանի, Երևան, 1991, էջ 153–155:

⁶³ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, էջ 377:

⁶⁴ Տէ՛ս Կտակգիրք, էջ 111:

⁶⁵ Բ. Մարգիսյանը «Κήρυγμα Πετρού»-ն նույնացնում է «Գործք Պետրոսի և Պաղոսի առաքելոց»-ին (տէ՛ս Բ. Մարգիսեան. նշվ. աշխ., էջ 12): Խոսքը, սակայն, Պետրոսի պարականոն ավետարանի մասին է, որտեղ նկարագրված են Հիսուսի դատավարությունը, խաչելությունը, մահը և հարությունը, հատվածաբար պահպանվել է նաև Հիսուսի՝ դժոխք իջնելու պատմությունը:

համարում է III–IV դդ. եկեղեցու հայրերի՝ երևութականության ուսմունքի դեմ գրված աշխատություններից արված յուրօրինակ ծաղկաքաղ, որ հետագայում կցվել է «Գործք Պիղատոսի»-ն⁶⁶: Իսկ երկի վերագրումը Միմեոն ծերունու հարություն առած երկու որդիներին⁶⁷՝ ինչպես նաև վերջաբանը, որ ավարտվում է ի փառս Հիսուս Քրիստոսի Հարության, ըստ գիտնականի, բարի նպատակով արված կեղծիքներ են⁶⁸:

«Նիկողիմոսի ավետարան»-ի «Էջբը դժոխք» հատվածի բացակայությունը պարականոնից հատուկ է ոչ միայն հայերեն թարգմանությանը, այլ, ինչպես վերը նշվեց, Արևելյան բոլոր տեքստերին: Այս հատվածը, թվում է, մեծ տարածում չի ունեցել Արևելյան քրիստոնեության մեջ, հանգամանք, որ բավական զարմանալի է, քանի որ դժոխքի ավերման ու արդար հոգիների այնտեղից ազատագրման գաղափարը շատ հին արմատներ ունի և մեծ տարածում է ունեցել Արևելյան Եկեղեցու հայրերի երկերում⁶⁹: Հիսուսի դժոխք իջնելու, դրա ավերման ու հոգիների ազատագրման [«Բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան եւ յետ Յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց» (Մտթ. ԻԷ, 52)] նորկտակարանյան պատմությունները նորանոր լրացումներ են ստացել պարականոն գրականության, նախ և առաջ՝ «Նիկողիմոսի ավետարան»-ում, և մեծ ազդեցություն ունեցել հատկապես հայ ճառագրության վրա: Հայ մատենագրության մեջ արտացոլված «Էջբը դժոխք» թեմատիկային առաջին անգամ անդրադարձել է Բ. Սարգիսյանը՝ Եղիշեին վերագրվող «Ի թաղումն Քրիստոսի» ճառն⁷⁰ ուսումնասիրելիս: Վերջինս իր ճառում ներառել է աստ-

⁶⁶ Ըստ երևութականության ուսմունքի՝ Հիսուսը չի տառապել, չի մահացել, չի թաղվել, հանդերձյալ աշխարհում չի եղել, ու, հետևապես, հարություն չի առել: Այդ ամենը կատարվել է միայն առ աչոք, երևութապես:

⁶⁷ Պարականոնում Հիսուսի դժոխք իջնելու, այն կործանելու և արդար հոգիներին ազատագրելու մասին պատմում են հարություն առած Միմեոնի որդիները՝ Կարինուսն ու Լենտիուսը, իսկ պատմությունն ի մի է բերում Նիկողիմոսը:

⁶⁸ Բ. Սարգիսյան. նշվ աշխ., էջ 20:

⁶⁹ S. Der Nersessian. An Armenian Version of the Homilies on the Harrowing of Hell.—Dumbarton Oaks papers, 8, (1954), Cambridge, Massachusetts, pp. 203, 221. Առհասարակ, «Յաղագս դժոխոցն կործանման», «Վասն սատանայի», «Վասն արդար հոգիների յազատումն ի դժոխոց» և նմանատիպ ճառերը, որոնք լայնորեն տարածված են եղել վաղմիջնադարյան քրիստոնեական աշխարհում, հայոց մեջ հիմնականում անանուն են շրջանառվել, իսկ օտար մատենագրության մեջ վերագրվել են տարբեր հեղինակների, ինչպես օրինակ՝ Եվսեբիոս Ալեքսանդրացուն (V դ.), Եվսեբիոս Եմեսացուն (300–360 թթ.), Հովհաննես Ոսկեբերանին (347–407 թթ.), Եփրեմ Ասորուն (306–373 թթ.), Եպիփան Կիպրացուն (315–403 թթ.) և այլն:

⁷⁰ Տե՛ս Սրբոյն Հօրն մերոյ Եղիշեի վարդապետի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 297: Եղիշեի անունով բազմաթիվ ձեռագրերում պահպանված և XIX դ. կեսերին Վենետիկում հրատարակված տասը ճառերի հեղինակային պատկանելությունը կասկածի տեղիք է սվել, քանի որ դրանք ինչպես ոճային, այնպես էլ լեզվական առումներով տարբերվում են «Պատմություն Վարդանանց»-ից:

վածաշնչյան պատմություններ, եկեղեցու հայրերի աշխատություններից հատվածներ, իսկ Քրիստոսի՝ դժոխք իջնելու պատմության շարադրման համար «Նիկողոզիմոսի ավետարան»-ը եղել է Եղիշեի հիմնական աղբյուրը: Բ. Մարգիսյանը բաղդատել է Եղիշեի վերոնշյալ ճառն ու Կ. Տիշենդորֆի կողմից հրատարակված «Նիկողոզիմոսի ավետարան»-ի լատիներեն տեքստը⁷¹: Համեմատությունները ցույց են տվել, որ հայ հեղինակը, ինչպես շատ այլ դեպքերում, ազատորեն է օգտվել բնագրից՝ այն փոփոխությունների ենթարկելով: Այն դեպքում, երբ պարականոնում Աստվածորդու տանելիք հաղթանակի վերաբերյալ երկար երկխոսություն է տեղի ունենում «արդար հոգիների», մասնավորապես՝ Ադամի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Նոյի, Աբելի, Մովսեսի, Մելքիսեդեկի, մարգարեների, Հովհաննես Մկրտչի մի կողմից և մյուս կողմից՝ մահի (դժոխքի) և նախամեղքի հայր սատանայի միջև, հայ հեղինակի երկում ամեն ինչ կենտրոնացված է միայն մարդկային ազատարարի՝ Հիսուս Քրիստոսի՝ մահվան ու դժոխքի դեմ տարած հաղթանակի վրա⁷²: Նկատի ունենալով Եղիշեի «Նիկողոզիմոսի ավետարան»-ից տեղ-տեղ ազատ և տեղ-տեղ էլ բառացի արած փոխառությունները, հարց է ծագում, թե արդյոք Եղիշեն ուղղակիորեն օգտվել է հունական բնագրից, թե իր ձեռքի տակ ունեցել է «Էջբր դժոխք»-ի հայերեն թարգմանությունը, որը, սակայն մեզ չի հասել (կամ՝ դեռևս չի հայտնաբերվել):

«Էջբր դժոխք»-ի թեմատիկան բավական տարածված է եղել միջնադարյան Հայաստանում⁷³, իսկ Եղիշեի ընդարձակ նկարագրությունը, ինչպես կարելի է ենթադրել, եզակի պատմություն չէ, որ ընդգրկել է Հիսուսի թաղումից հարությունն ընկած ժամանակաշրջանը⁷⁴: IX դ. Չաքարիա Չազեցի կաթողիկոսը (855–877 թթ.), ով իր երկերում խտացրել է հույն հայրերի ու ջատագովների երկերը, ոչ միայն ճանաչել է «Նիկողոզիմոսի ավետարան»-ի խնդրահարույց հատվածը, այլ նաև ընդարձակ փոխառություններ է արել այնտեղից իր «Ի մեծի թաղման տեառն շարաթ ճրագալոյցին» խորագրված ճառում, ուր ներառված են Քրիստոսի դժոխք իջնելու և այն կործանելու մասին սատանայի, դժոխքի իշխանության ու մահվան թագավորության միջև եղած

⁷¹ C. Tischendorf. Նշվ. աշխ., էջ 388–430:

⁷² Բ. Մարգիսյան. նշվ. աշխ., էջ 10–11:

⁷³ S. Der Nersessian. An Armenian Version..., p. 203. *Դժոխքի ավերման թեմատիկան հայ մանրանկարչության անբաժանելի մաս է դարձել սկսած X դարից (տե՛ս V. N. Nersessian. A Catalogue of Armenian Manuscripts in the British Library Acquired since the Year 1913 and of Collections in Other Libraries in the United Kingdom, 2012, London, pp. 34–36); նաև՝ Ս. Գեորգեան. Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն IX–XIX դդ., Կահիրե, 1998, էջ 753, նույնի՝ Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտություն IX–XVII դդ., Կահիրե, 2005, էջ 644:*

⁷⁴ A Homily on the Passion of Christ Attributed to Elishe, trans. from classical Armenian with introduction and notes by R. W. Thomson, Leuven, 2000, pp. 11–12.

երկխոսությունները⁷⁵: Չաքարիան իր այս, ինչպես նաև «Ի չարչարանս Քրիստոսի» ճառերը գրելիս, հավանաբար, աչքի առաջ է ունեցել և՛ Եղիշեի ճառը, և՛ թե պարականոն ավետարանի հայերեն թարգմանությունը⁷⁶: Թե՛ Եղիշեին և թե՛ Չաքարիա կաթողիկոսին ծանոթ են եղել նաև Թեոփիլոսին⁷⁷ ու Եպիփան Կիպրացուն⁷⁸ վերագրվող ճառերը, որոնց բովանդակությունը հիշեցնում է «Էջբը դժոխք»-ը: Հարց է առաջանում, թե արդյոք հայ հեղինակներն օգտվել են պարականոնի մաս կազմող «Էջբ»-ի հայերեն թարգմանությունից, թե՞ դրա նմանողությամբ գրված հունարեն ճառերից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերեն ճառերը շատ ավելի մեծ ընդհանրություններ ունեն «Նիկողիմոսի ավետարանի» հետ, քան հունարեն բնագրերը: Երուսաղեմի սբ. Հակոբյանց վանքում պահվող մի ձեռագրում՝ թիվ 1293-ում (1363 թ., Դրիմ), ի թիվս այլ պարականոն ավանդությունների նշանավոր արվեստագետ Ս. Տեր-Ներսիսյանը հայտնաբերել է նաև «Պատմութիւն Յովհաննու որդոյ Չաքարիայ. «Յաղագս դժոխոցն կործանման եւ վասն սատանայի, թէ որպէս որսաց Տէր զանմարմին թշնամին եւ ազատեաց զարգելեալսն ի նմանէն» խորագրով գրվածքը, որը և հրատարակել է անգլերեն թարգմանությամբ: Տեր-Ներսիսյանն այն համեմատության մեջ է դրել Եվսեբիոս Ալեքսանդրացուն վերագրվող հունարեն մի ճառի հետ: Հունարեն ու հայերեն տեքստերի միջև նմանություններն ակնհայտ են, միայն այն տարբերությամբ, որ, ինչպես շատ դեպքերում, այս անգամ ևս հայ թարգմանիչը ազատորեն է երկր փոխադրել հայերենի՝ դուրս թողնելով հունարենում առկա երկար կրկնողություններն ու ներառելով առանձին գրուխներ⁷⁹: «Պատմութիւն Յովհաննու» ճառի⁸⁰ բովանդակությունը հիշեցնում է «Նիկողիմոսի ավետարան»-ի «Էջբը դժոխք»-ի պատմությունը, որ սկսվում է անդրշիրիսյան աշխարհում իրենց փրկութ-

⁷⁵ Տե՛ս Չաքարիա Չագեցի. Ի մեծի թաղման տեսոն շաբաթ ճրագալուցին.– Մատենագիրք Հայոց, հ. Թ, Թ դար, կազմ. Հ. Քյոսեյան, Անթիլիաս-Լիբանան, 2008 (այսուհետև՝ Մատենագիրք Հայոց), էջ 215–225:

⁷⁶ Այս ամենից Բ. Մարգիսյանը եզրակացնում է, որ թե՛ Եղիշեի ճառերը, և թե՛ «Նիկողիմոսի ավետարան»-ի հայկական ամբողջական թարգմանությունը գոյություն են ունեցել IX դ. առաջ (տե՛ս Բ. Մարգիսյան. նշվ. աշխ., էջ 21):

⁷⁷ Տե՛ս S. Der Nersessian. Armenian Homilies Attributed to Theophilus.– Etudes Byzantines et Armeniennes, pp. 469–479.

⁷⁸ Հատկապես «արդարների» անունները վկայակոչելու հատվածում հայերեն փոխառությունները մեծ ընդհանրություններ ունեն «Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ ասացեալ յԱւր մեծի յարութեան Յիսուսի Քրիստոսի և առ Յովանէս» խորագիրը կրող ընդարձակ ճառի հետ (տե՛ս Գ. Չարբիանալյան. Թարգմանութիւն նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 416, նաև՝ Սուրբ Եպիփան Կիպրացի. Ճառք, Էջմիածին, 2013, էջ 203–207):

⁷⁹ S. Der Nersessian. “An Armenian Version...”, p. 211.

⁸⁰ Տե՛ս ՄՄ, - 640 ձեռ., էջ 280ա–288բ: Այս ճառը հայ մատենագրության մեջ վերագրվում է նաև Թեոփիլոս Անտիոքացուն (տե՛ս Մատենագիրք Հայոց, էջ 820–828):

յանն սպասող մարգարեների՝ Աստծո Որդու փրկչական գործունեության մասին բազմաթիվ վկայություններով: Հովհաննես Մկրտիչը, ում անունից պատմվում է այս առասպելը, ինչպես երկրի վրա, այնպես էլ անդրշիրիմյան աշխարհում հանդես է գալիս որպես վկա և քարոզում Հիսուսի մոտալուտ գալստյան մասին՝ նախապատրաստելով արդարների փրկությունը: Այս ճառում Հովհաննեսը ներկայացնում է Հիսուսի կատարած հրաշքների երկար շարք, որոնց մասին նա պատմում է որպես ականատես. «Եվ իմ ձեռքերով ես մկրտեցի նրան Հորդանան գետում»⁸¹: Նույն խոսքերը գտնում ենք «Նիկողոսիանոսի ավետարան»-ի «Էջբը դժոխք»-ում, սակայն հրաշքները մանրամասն ներկայացնելու Հովհաննես Մկրտչի պատրաստակամությունն առանձնահատուկ է միայն հայկական տարբերակին⁸²:

Ճառի հունարեն տարբերակում անդրադարձ չի արվում Ադամին, այնինչ հայկական թարգմանության մեջ նշանակալի տեղ է հատկացվում նախամարդուն: Մրանով հանդերձ հայկական ճառը սերտ աղերսներ ունի «Նիկողոսիանոսի ավետարան»-ի հետ⁸³: Ադամը Մկրտչին է հայտնում դրախտից վտարվելու ժամանակ ուղղակիորեն Աստծուց ստացած խոստման մասին, ըստ որի՝ իր փրկությունն իրագործվելու է Մարդեղության միջոցով⁸⁴:

Սատանայի ու անձնավորված դժոխքի⁸⁵ միջև երկխոսությունը կազմում է ինչպես պարականոն ավետարանի, այնպես էլ դրա նմանողությամբ գրված ճառերի առանցքը: Սատանայի գլխավոր գործառույթն այստեղ Հիսուսի հասարակ մահկանացու լինելն ապացուցելն է, և որպես փաստարկ նա մեջբերում է նորկտակարանյան «Տրտում է ոգի իմ մինչև ի մահ» (Մտթ. ԻԶ, 38) արտահայտությունը: Թեև սատանան հիշատակում է Հիսուսի կատարած բազմաթիվ հրաշքները և իր կողմից հավիտենական տանջանքների դատապարտվածներին տառապանքներից ազատելը, այնուամենայնիվ, նա համոզված է, որ իրական Աստծո Որդին մահից չէր վախենա: Հե-

⁸¹ H. Cowper. Նշվ. աշխ., էջ 350:

⁸² S. Der Nersessian. An Armenian Version..., pp. 213–214.

⁸³ Նույն տեղում, էջ 214: «Նիկողոսիանոսի ավետարան»-ի հետ տարբերությունը, թերևս, արտահայտվում է նրանով, որ հայկական ճառում բացակայում է Մեթի և օձյալ ծառի մասին պատմությունը, որը հիշեցնում է հրեական ծագմամբ և հետագայում քրիստոնեացված Մեթյան կոչվող պարականոն ավանդությունը:

⁸⁴ Տե՛ս Մ. Հո վ ս ե փ յ ա ն. Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, հ. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց, էջ 512, էջ 329:

⁸⁵ Չաքարիա Չազեցու «Ի մեծի թաղման Տեառն շաբաթ ճրագալոյցին» ճառում սատանան ու դժոխքն անվանվում են Իշխանութիւնքն մահու և պետութիւնքն դժոխսց (ընդձոււմը մերն է – Մ. Մ.) (տե՛ս Մատենագիրք Հայոց, էջ 216):

տարրերական է, որ այստեղ ոչ թե սատանան, այլ դժոխքն է վախենում Հիսուսից, նամանավանդ, երբ սատանան հիշատակում է Ղազարոսի հարություն առնելը⁸⁶:

Ինչպես և կարելի էր ենթադրել, պարականոնի հեղինակն «Էջբր դժոխք» հատվածն ավարտում է դժոխքի կործանմամբ ու արդարների ազատագրմամբ՝ ևս մեկ անգամ փաստելով Հիսուսի աստվածային էությունը և մարդկանց դեպի փրկություն տանելու Նրա մեծագույն առաքելությունը:

«Նիկողիմոսի ավետարան»-ը («Գործք Պիղատոսի») հայտնի է որպես մշակութապես ամենից հարուստ պարականոններից մեկը: Այն լայնորեն կիրառվել է միջնադարյան գրականության և արվեստի բնագավառում⁸⁷: Ինչպես միջնադարյան մեծ տարածում ունեցող մյուս պարականոնները, այն ևս փոխակերպվել է պոեմների, բանաստեղծությունների և առհասարակ հարուստ նյութ դարձել պատկերագրության ու գեղարվեստական պատմությունների ստեղծման համար:

«ЕВАНГЕЛИЕ ОТ НИКОДИМА» («АКТЫ ПИЛАТА») И ОСОБЕННОСТИ АРМЯНСКОГО ПЕРЕВОДА

МАРИ МАМЯН

Резюме

Армянский перевод апокрифического сочинения «Евангелие от Никодима» был довольно широко распространен в средневековой Армении. В свидетельствах древнейших христианских писателей этот апокриф не приписывается Никодиму: его обозначение этим именем относится к более позднему времени (XIII в.). В армянских же рукописях авторство этого сочинения в основном (особенно в поздних переработках текста) приписывается Иакову, брату Господню. «Евангелие» состоит из двух тематически не связанных между собой частей. Первая часть апокрифа известна под названием «Акты Пилата» и посвящена допросу Иисуса, суду над ним и «Посланию Пилата императору Тиберию». Вторая часть евангелия – «Сошест-

⁸⁶ Ղազարոսի հարությանն առնչվող ճառերի մասին մանրամասն տե՛ս S. Der Nersessian. A Homily on the Raizing of Lazarus and the Harrowing of Hell.– Etudes Byzantines et Armeniennes, Louvain, 1973, pp. 457–467. Վիեննայի Միխիթարյան Միաբանության Մատենադարանի - 10 ձեռագրի մեջ պահվող անանուն երկի (ԺԶ դ., էջ 359ա–359բ) բովանդակությունը հիշեցնում է «Նիկողիմոսի ավետարան»-ի հայերենում չպահպանված կամ գուցե նաև չթարգմանված «Էջբր դժոխք»-ը (տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, կազմ. Հ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 97):

⁸⁷ I. Zbigniew. Նշվ. աշխ., էջ 3:

вие в ад» (“Descensus ad Infernos”), описывающая сошествие Христа в ад, известна только в латинских и западных переводах апокрифа. В древнейших восточных рукописях (в том числе, в армянских) и в большей части греческих кодексов она отсутствует. Однако тот факт, что в сочинении «О Погребении Господнем» (приписывается армянскому историку V века Егише) используются отрывки из этой части апокрифа, дает основание некоторым исследователям полагать, что полная версия «Евангелия от Никодима» была переведена на армянский язык уже в V веке.

THE “GOSPEL OF NICODEMUS” (“ACTS OF PILATE”) AND THE PECULIARITIES OF ITS ARMENIAN TRANSLATION

MARI MAMYAN

Summary

The Armenian translation of the “Gospel of Nicodemus” was one of the most common apocryphal writings in medieval Armenia. The gospel is not attributed to Nicodemus in writings of ancient Christian authors: the designation of this apocryphon as “Gospel of Nicodemus” has a more recent origin (13th c.). In Armenian manuscripts (especially in later editions of the text) the authorship of the apocryphon is attributed to James, the Lord's brother. The “Gospel” consists of two thematically unrelated parts. The first part is commonly known as the “Acts of Pilate” and is devoted to the interrogation of Jesus, his trial and the “Epistle of Pilate to Emperor Tiberius”. The second part of the apocryphon describes the descent of Christ into Hell (Descensus ad Infernos). It should be noted that the “Descent into Hell” is to be found only in Latin and Western translations of the apocryphon. In ancient oriental manuscripts (including Armenian ones) and in most of Greek texts it has not been found yet. However, the fact that some fragments of this part are used in “On Burial of the Lord” (this composition is attributed to the fifth century Armenian historian Yeghishe) gives grounds to assume that the full version of the “Gospel of Nicodemus” was translated into Armenian in the 5th century.